M.K. AGHAYAN

AN INSTITUTIONAL APPROACH TO SUBSTANTIATING THE ECONOMIC ROLE OF THE STATE

The analysis of all the factors affecting the socio-cultural environment conditioning the economic processes, the legal-political approach in the analysis of economic processes and the application of market principles are very important. By safeguarding the principles of private property, individual liberty, and immunity, the state, through institutional instruments, should protect the public from possible structural and legal distortions.

***Keywords**:* institutionalism, "theory of order", economic freedom, monopoly, competition, state intervention, social responsibility, managed development, institutional infrastructure.

ՀՏԴ 329[479.25):336.563:94[4)″1914/19″

Ա.Ս. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ/1908-14ԹԹ./

Դիտարկվում են հայ քաղաքական կուսակցությունների կազմակերպական կառույցները Եղեռնի նախօրեին, ինչը հնարավորություն է տալիս վերլուծել արևմտահայության շրջանում նրանց ներկայացվածությունն ու գործունեության արդյունավետությունը:

Առանցքային բառեր. Կենտրոնական կոմիտե, մասնաճյուղ,Վարիչ մարմին, կուսակցության անդամ, կազմակերպական մարմիններ:

Աշխատանքում հարցը դիտարկվում է տեսական նոր մոտեցմամբ՝ կատարելով հիշյալ ժամանակաշրջանում հայ քաղաքական կուսակցությունների գործունեության ընթացքը ստուգող հետազոտություններ: Հայ քաղաքական կուսակցությունների կազմակերպական կառույցների /1908-1914 թթ./ ուսումնասիրության նպատակը Առաջին աշխարհամարտի նախօրյակին Օսմանյան կայսրության տարածքում հայ կուսակցությունների կազմակերպական կառուցվածքի, նրանց ներկայացվածության իրական պատկերի և հայերի ինքնապաշտպանության ուղղությամբ ընդունված որոշումների կատարման ընթացքի հետազոտությունն ու ներկայացումն է:

Հիշյալ ժամանակաշրջանում Օսմանյան կայսրությունում գործում էին երեք կուսակցություններ՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը, Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը և Սահմանադիր ռամկավար կուսակցությունը [1908 թ. Ալեքսանդրիայում վերակազմյալ հնչակյանների և արմենական կուսակցության միավորմամբ ձևավորված) [1]:

Հայ հեղափոխական կուսակցության կառույցները 1908թ. երիտթուրքական հեղաշրջմամբ հաստատված սահմանադրական կարգի արդյունքում, բնականաբար, պետք է ենթարկվեին փոփոխությունների: Այդ փոփոխությունը ցույց տալու համար կներկայացնենք կուսակցության չորրորդ, հինգերորդ ընդհանուր ժողովների որոշումներն ու դրանցում կազմակերպական կառույցների էվոլյուցիոն կառուցվածքի մասին տեղեկություններ, ապա հաջորդիվ կանդրադառնանաք նաև կուսակցության ներկայացվածության մակարդակին Օսմանյան կայսրության առանձին շրջաններում: Հ.Յ. Դաշնակցության կազմակերպական կառույցների աշխարհագրության, տարբեր բնակավայրերում դրանց խտության վերաբերյալ պատկերացում ենք կազմում դաշնակցական գործիչների հուշերում, նամակներում, մամուլի հրապարակումներում այդ մասին առկա անուղղակի տեղեկատվության, ընդհանուր ժողովների նյութերում կոմիտեների, կենտրոնական կոմիտեների և այլ մարմինների վերաբերյալ տեղեկատվության և այլ միջոցներով:

Այսպես. Վանի վիլայեթում բնակչության թիվը կազմում էր 542 հազ. մարդ, որից 192 հազարը հայեր էին [2]: Հ. Յ. Դաշնակցությունը Վանի վիլայեթի տարածքում, մասնավորապես Վանում, Մուշում, Սասունում և այլուր, առավել խիտ կառույցներ ուներ: Ներկայացնենք դրանք առանձին- առանձին:

Համաձայն 1909 թ. վիճակագրության՝ Շատախի շրջանում տեղի 12 գյուղերում կազմակերպված կոմիտեների կուսակցական անդամների թիվը հասնում էր 300-ի: Առանձին խմբերի արհեստակցական միության անդամներն էլ կազմում էին 80 հոգի:

Մոկսի շրջանի 10 գյուղերում կուսակցական անդամների թիվը հասնում է 150-ի: Տեղում, սակայն, կազմակերպական ուժեղ կառույց չկար:

Սպարկերտի գյուղերում կային 15 կոմիտեներ, անդամների թիվը կազմում էր 250: Այստեղ ևս կազմակերպական կառույցը շատ ազդեցիկ չէր, և տեղում ինքնապաշտպանություն կազմակերպումն առանձնապես բարձր մակարդակով չէր [3]:

Խիզանի շրջանում կազմակերպական կառույցներ եղել են 1907 թ., իսկ 1909 թ. դրությամբ այստեղ կուսակցական կառույցները և, հետևաբար, նաև կուսակցական ներկայությունը բացակայել են:

Կարկառի 12 գյուղերում կային կազմակերպված կառույցներ, ձևավորվել և գործում էր շրջանային վարչություն, անդամների թիվը հասնում էր 250-ի:

Գավաշի 6 գյուղում կուսակցությունն ուներ կազմակերպված կառույցներ, իսկ անդամների թիվը կազմում էր 200-ը: Կա վկայություն այստեղ կազմակերպական բարձր մակարդակի մասին, ինչի ապացույցն է հետագայում ինքնապաշտպանական մարտերի ժամանակ ցուցաբերված դիմադրությունը:

Կարճկանի գյուղերում կային 20 կազմակերպված կառույցներ, անդամների թիվը հասնում էր 600-ի: Այստեղ գործել է շրջանային վարչություն, որն էլ հետևել է ինքնապաշտպանական գործի կազմակերպմանը:

Հայոց ձորում կազմակերպված կառույցների թիվը հասնում էր 20-ի, իսկ կուսակցական անդամների թիվը՝ 300-350-ի: Հայությունը տեղում ունեցել է տնտեսական ապահովվածության բարձր մակարդակ, իսկ 1915 թ. ինքնապաշտպանություն ցուցաբերած դիամադրական կետերից մեկն է եղել:

Վասպուրականի հարակից շրջաններում կազմակերպված էր 5 կառույց՝ կուսակցական 51 անդամով: Իսկ Ատելջավազում կուսակցությունն ունեցել է կազմակերպական կառույցներ 19 գյուղում՝ ավելի քան 600 անդամներով:

Արճեշում կար կուսակցական 8 խումբ՝ 80 անդամով, այստեղ գործում էր առանձին ենթակոմիտե: Բաշկալեում գործում էր 10 խումբ՝ 81 անդամով: Սարայում կար կուսակցական 4 խումբ՝ 25 անդամով: Նոր Դուզն ուներ 5 կառույց 25 անդամով:

Այսպիսով՝ առկա նյութերի հիման վրա կարող ենք արձանագրել, որ 1909 թ. դրությամբ Վասպուրականում կար 100-ից ավելի կոմիտե, եթե ընդունենք այդ մարմիններում ընդգրկվելիք անդամների քանակի վերաբերյալ կուսակցության սահմանած չափանիշները, ապա Բիթլիսի վիլայեթում գործուն անդամների թիվը կազմում էր մոտավորապես ավելի քան 1500 հոգի:

Տարոնում կուսակցությունը երիտթուրքական հեղաշրջումից հետո ուներ բավական մեծ հեղինակություն, այսինքն՝ սա նշանակում է՝ եթե վերջինս արթուն պահեր իր մարտական կառույցները, կմնար հետևողական իր նախկին կարգախոսների մեջ և ավելի արմատական ճանապարհ կընտրեր ոչ միայն հայության, այլև այլազգիների համար[4]: Չնայած այս հնարավորություններին՝ Դաշնակցությունը կորցրեց իր հեղափոխական նկարագիրը, և սա այն դեպքում, երբ երիտթուրքերը սկզբից էլ կեղծ էին: Պարզ է, որ ինչպես Տարոնում, այնպես էլ ամենուր կուսակցությունը կորցնում է իր զգոնությունը, իսկ հետագայում սթափվելուց հետո, հնարավոր չեղավ այդքան կարճ ժամանակամիջոցում ինքնակազմակերպվել և նվազեցնել երիտթուրքական բնաջնջման վտանգը[5]: Այս մարտավարության պատճառներից մեկն էլ կուսակցական անդամների փոփոխությունն է: Սահմանադրության շրջանում, մանավանդ երիտթուրք – Հ.Յ. Դաշնակցություն հարաբերությունների ձևավորման ընթացքում դաշնակցական լինելը պատվաբեր էր, ամեն երկրորդը իրեն համարում էր հեղափոխական: Հենց նման «կեղծ հեղափոխականների» ասպարեզ դուրս գալով էլ հիսաթափության մթնոլորտում հետ են մղվում նախկին հեղափոխականները: Ձևավորվում են Վանում կառույցներ, որտեղ ներգրավված էին և՛ հեղափոխական գործին իսկական նվիրյալը, և՛

նախկինում հեղափոխական գործը մերժողը: Մշո առաջնորդարանում, օրինակ, փոխվում է անդամների կազմը այստեղ ընդգրկվում են տարբեր խավերի, տարբեր հոսանքների ներկայացուցիչներ, ինչի արդյունքում կուսակցության իսկական միջուկը խիստ նվազում է:

Ինչ վերաբերում է Հ.Յ. Դաշնակցության Կ. Պոլսի կենտրոնական կոմիտեի գործունեությանը, ապա այն սահմանադրությունից հետո ուներ բավական բարձր կազմակերպվածության մակարդակ՝ 19 կոմիտե իր ենթակոմիտեներով [6]: Մոտավոր հաշվարկներով Կ.Պոլսում Հ.Յ. Դաշնակցություն կուսակցության ներկայացուցիչների թիվը հասնում էր 3000-ի [քանի որ յուրաքանչյուր կոմիտե ուներ մոտավոր 200 անդամ): Բնականաբար, այս թիվը հստակ չի կարող լինել, բայց այն, որ տեղում այս կուսակցությունը ակտիվ գործունեություն է ծավալել իր բարձր ներկայացվածության հաշվին, անքննելի է:

Տիգրանակերտի նահանգի կամ Վիշապաձորի շրջանի կազմակերպվածության և այստեղ կուսակցական ներկայության մակարդակի մասին լայն հաղորդումներ կան 1909 թ. շրջանային ժողովի արձանագրությունում, ինչից պարզ է դառնում, որ կուսակցությունն ունի 2000 անդամ, տարեկան 500 ոսկի եկամուտով: Այստեղ ներկայացվում է նաև կուսակցության անդամագրվելու սկզբունքները, կարևորվում այլ կուսակցությունների անդամագրման բացառումը, կուսակցական պրոպագանդան [գրախանութների միջոցով), Կարմիր Խաչ կոչվող կանանց կազմակերպության գործունեությունը, բյուջեի համալրման և այլ խնդիրներ:

Մեկ այլ տեղեկության համաձայն՝ Տիգրանակերտի հայ բնակչության մեծ մասը խանդավառված էին հեղափոխական կոչերով և հարում էին դաշնակցությանը: Մ. Վարանդյանը գրում է. «Գաւառներէն, ժողովրդական շարժումը լաւապես ղեկավարելու համար գրեցինք Պոլսոյ Պատասխանատու մարմնին մէկ կամ երկու աչքառու գործիչ ղրկէ. 1909 թ. մեզ ղրկեցին Մուրատ ու Ղեւոնդ Մելոյանը» [7]:

Այսպիսով, Տիգրանակերտը այն քիչ նահանգներից էր, որն այս կա-րև-որ շրջանում չգնաց քայքայման ճանապարհով, այլ ինքնակազմակերպվեց և ձեռք բերեց բարձր մակարդակ: Այլ խնդիր է, որ հետագայում կուսակցությունը թուլացրեց զգոնությունը այդ շրջանում և, ի տարբերություն Վանի, այստեղ երիտթուրքական հարձակումների շրջանում լուրջ դիմադրություն չկազմակերպվեց:

Հ.Յ. Դաշնակցության կառույցներ կային Սեբաստիայի նահանգում ևս: Սեբաստիայում կար 1 մլն 500 հազ. բնակչություն, որից 271 հազ. քրիստոնյաներ էին, իսկ հայերի թիվը 170 հազ. էր կազմում:

Սահմանադրական կարգերի հաստատմամբ՝ Օսմանյան կայսրությունում կուսակցությունը դադարեցնում է ռազմա-հեղափոխական ձեռնարկները, ինչի հետևանքով վերացվում են նաև Պատասխանատու մարմինները: Այս կառույցի

լուծարմամբ կուսակցությունը փաստորեն հրաժարվում էր հեղափոխական գործելակերպից:

Այդուհանդերձ, արդյունքներից պարզ է դառնում, որ Հ.Յ. Դաշնակցությունը Թուրքիայում սահմանադրական կարգերի հռչակումից հետո կազմակերպական կառույցների մասով էական փոփոխության չդիմեց: Ընդհակառակը, կուսակցությունը գնաց նախկին կառույցների լուծարման ճանապարհով, ինչն էլ հանգեցրեց ինքնապաշտպանության գործի կազմակերպման, ուժերի կենտրոնացմանն ուղղված քայլերի լճացման: Քննադատել և նսեմացնել կուսակցության գործունեությունը միանգամայն սխալ է, բայց պատերազմի նախօրեին և հաջորդ տարիներին իրականացված յուրաքանչյուր քայլ զերծ չէր շտապողական և անհեռատես գործելակերպից:

Փորձենք ներկայացնել Հնչակյան կուսակցության կազմակերպական մարմինների ընդհանուր վիճակը Օսմանյան կայսրությունում երիտթուրքական հեղաշրջման շրջանում և դրանից հետո: Կանդրադառնանք նաև Հնչակյան կուսակցության և իթթիհատական կուսակցության հարաբերություններին, այդ շրջանում կուսակցության որդեգրած մարտավարությանը:

Այդուհանդերձ, չնայած կատարված աշխատանքներին, հետագա դեպքերը ցույց տվեցին, որ Շապին-Գարահիսարում կուսակցական կառույցները բավական թույլ էին, ինչի լավագույն ապացույցը հետագայում ինքնապաշտպանական մարտերի անհաջող ընթացքն էր:

Հնչակյան կուսակցությունը որոշակի ներկայացվածություն ուներ Ուրֆայում: Այստեղ կուսակցական ներկայության մասին էական տեղեկություններ չկան: Բայց հաղորդումների և վկայությունների հանդիպում ենք դեռևս 1914 թ. թուրքական կառավարության կողմից Ուրֆայի հայությանը տեղահանության կոչի նախօրեին:

Սահմանադրական շրջանում Հաճնում էին գտնվում հնչակյան տեղի մասնաճյուղի անդամները, որոնք նախատեսում էին դիմադրական ներքին աշխատանքներ կատարել: 1915 թ. ջարդերի նախօրեին տեղում կազմակերպվեց դիմադրություն՝ Տեր Ներսես եպիսկոպոս Դանիելյանի գլխավորությամբ [8]:

Հնչակյան կառույցների թվում որոշակի դեր են ունեցել ուսանողական միությունները: Դրանք առաջին հայացքից, թվում է, պետք է քարոզչական գործունեությամբ և կուսակցության գաղափարների տարածմամբ զբաղվեին, բայց Մեծ եղեռնի նախօրեին կազմակերպչական բնույթի աշխատանքներ իրականացրեցին:

Սեբաստիայում [այստեղ կազմակերպական քայլեր սկսվել էին դեռևս 1910 թ.՝ ի դեմս վերաքննիչ հանձնաժողովի, որը պիտի զբաղվեր զինման խնդիրներով) [9], Տրապիզոնում և Տիգրանակերտում ուսանողական միության ներկա-

յացուցիչները փորձել են տեղերում անպաշտպան հայությանը համախմբել և դիմադրություն կազմակերպել: Այս ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունավետության վերաբերյալ էական տեղեկություններ չկան, բայց այն, որ ղեկավար ուժերին [Փարամազ-Տիգրանակերտ և Տրապիզոն) ձերբակալելուց հետո էական դիմադրություն չի կազմակերպվել, թույլ է տալիս եզրակացնել, որ էական ձեռքբերումներ չեն գրանցվել [10]: Հարկ է նշել, որ 1908-1914 թթ. ընթացքում Հնչակյանները, ի տարբերություն Հ.Յ. Դաշնակցությանը, բացասաբար էին տրամադրվել երիտթուրքերի նկատմամբ և զգուշավոր մոտեցում ունեին: Եվ չնայած այդ մոտեցմանը, այնուամենայնիվ, էական և ամուր նշանակության կառույցների ճանապարհով չգնացին:

ՌԱԿ-ի գործունեության կենտրոնը սահմանափակվում էր Վանով: Այս կուսակցության ներկայացուցիչները արդյունավետ գործողություններ և մասնակցություն ունեցան Վանում ծավալվող մարտերի ժամանակ, այլ վայրերում էական և լուրջ գործունեության դրվագների չենք հանդիպում:

Այսպիսով, հայ քաղաքական կուսակցությունների գործունեության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարել եզրակացություն. Ձեռնարկվեցին քայլեր, ընդունվեցին մի շարք որոշումներ, բայց իրականում գործողության վերածելու ուղղությամբ դրանք արդյունավետությամբ աչքի չընկան:

Նման քննադատությունը երբեմն հասնում է ծայրահեղության. «Հայ քաղաքական կուսակցութիւնները իրենց կազմակերպական մարմիններով անհատական հանգամանք մը տալ ուզած են... իրենց պատմութիւնը սամանափակվի միայն իրարու դեմ քննադատություններով և իրարու անդամների մեղադրանքներով» [11]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Ղազարյան Վ.** Համառոտ պատմութիւն ՌԱԿ-ի.- Պէյրութ, 1978. -27 էջ :
2. **Լեփսիուս Յ.** Գաղտնի Տեղեկագիր. Հայաստանի ջարդերը.- Կ.Պոլիս /Տպ. Յ. Ասատուրեան եւ որդիք, 1919. -67 էջ :
3. **Նիւթեր**... հատ. Ը.- Պէյրութ, 2011.-229 էջ:
4. **Երամեան Հ.** Հուշարձան Վան-Վասպուրականի.-հատ. Բ. Աղեքսանդրիա, 1929. -47էջ:
5. **Ներսիսյան Ա**. Նշվ. աշխ., հատ. Գ.-27 էջ :
6. **Նիւթեր**... հատ. Ը.- Պէյրութ, 2011.- 330 էջ:
7. **Վարանդեան Մ.** Պոսթըն, Մուրատ, հրատ./ Մուրատ ֆոնդի կեդրոնական վարչ./- 1931.- 132 էջ:
8. Յուշարձան նուիրուած Սօցիալ դեմոկրատ հնչակեան կուսակցութեան քառասնամեակին.- էջ 63:

9. ՀԱԱ, ֆ. 408, ց. 1 , գ. 92, թ. 2:
10. Յուշարձան նուիրուած Սօցիալ դեմոկրատ հնչակեան կուսակցութեան քառասնամեակին, էջ 63:
11. **Սապահ-Գիլեան Ս.** Պատասխանատուները.- Պէյրութ: Դոնիգեան և որդիներ հրատ., 1974.-էջ 8:

А.С. ТАДЕВОСЯН

ПРОБЛЕМЫ ФИНАНСИРОВАНИЯ АРМЯНСКИХ ПОЛИТИЧЕСКИХ ПАРТИЙ НАКАНУНЕ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

Рассматриваются организационные структуры армянских политических партий накануне Геноцида, на основе чего становится возможным анализ их представительства и эффективности их деятельности среди западных армян.

В статье сделана попытка взглянуть на проблему с другой теоретической точки зрения. Изучается степень представительства армянских партий в Османской империи в этот период, раскрывается реальная картина потенциальных, географических заявлений и решений в целях самообороны.

Ключевые слова: Центральный комитет, филиал, руководящий орган, член партии, организационные органы.

A.S. TADEVOSYAN

THE PROBLEM OF FINANCING THE ARMENIAN POLITICAL PARTIES ON THE EVE OF THE FIRST WORLD WAR

The organizational structures of the Armenian political parties on the eve of the Genocide are considered, on the basis of which, it becomes possible to analyze their representation and the effectiveness of their activities among the Western Armenians.

In this article, an attempt is made to look at the issue from a different theoretical point of view, conducting a study examining the degree of representation of Armenian parties in the Ottoman Empire during this period, revealing the real picture of potential, geographical, self-defense statements and decisions.

Keywords: Central Committee, branch, governing body, party member, organizational bodies.